

Անգին եարս նոր է ծաղկել գարնան
պէս

Երեսը ցնծաղիկ, 'ունջ մազերը վարդ,
Առաւօտուայ չքնաղ արշալոյսի պէս
Աչերը գեղեցիկ, թարթիչները վարդ:

Հնդու 'երի արի, եարիս խալը տես,
Քեզանից սիրուն է, իմ մարալը տես,
Շահէնի քնարի ոսկէ լարի պէս,
Ձայնը անուշ, քաղցրիկ, շրթունքները
վարդ:

Անգին եարս զով աղբիւր է մեր
պառչում
Գիշեր ցերեկ սիրոյ տաղ է
կարկաչում,
Վառ լուսնեակն է եարիս խալից
ամաչում,
Պոյը սալ'ու չինար, սեւ խալերը
վարդ,

Հնդու 'երի արի, եարիս խալը տես,
Քեզանից սիրուն է, իմ մարալը տես,
Շահէնի քնարի ոսկէ լարի պէս,
Ձայնը անուշ, քաղցրիկ, շրթունքները
վարդ: